Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-361-14.10.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում «երթուղային տաքսի» հասկացությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«օպերատոր՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների ներքաղաքային կանոնավոր փոխադրումներ իրականացնող 100 տոկոս համայնքային մասնակցությամբ կազմակերպություն»:

Հոդված 2.Օրենքի 11-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «(այսուհետ՝ կազմակերպություններ)» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ ավտոբուսային կանոնավոր փոխադրումներն իրականացնում է օպերատորը:» բառերը:

2. 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Երթուղու սպասարկումն իրականացվում է մրցույթում հաղթող կազմակերպության կողմից մրցույթի ժամանակ առաջարկված փոխադրավարձով, բացառությամբ օպերատորի կողմից սպասարկվող երթուղիների, որտեղ երթուղիների սպասարկումն իրականացվում է ավագանու կողմից սահմանված փոխադրավարձով:

Երթուղու փոխադրավարձը կարող է վերանայվել օբյեկտիվ պատճառներով (դրամի արժեզրկում կամ արժեորում, վառելիքաքսուքային նյութերի, տրանսպորտային միջոցների և ավտոպահեստամասերի գների փոփոխություն) մրցութային հանձնաժողովի նախաձեռնությամբ կամ կազմակերպության ներկայացրած հիմնավոր հաշվարկների հիման վրա՝ մրցութային հանձնաժողովի ներկայացմամբ և երթուղային ցանցը կազմակերպող համապատասխան մարմնի

որոշմամբ, իսկ ավագանու կողմից սահմանված փոխադրավարձի դեպքում՝ մրցութային հանձնաժողովի ներկայացմամբ և ավագանու որոշմամբ:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1. «ե» կետն ուժը կորցրած ճանաչել.
2. Լրացնել նոր «ը» կետով հետևյալ բովանդակությամբ՝

«ը) Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման համար սահմանված պետական տուրքը հաջորդող յուրաքանչյուր տարվա համար չվճարվելը:»:

2. 2-րդ պարբերությունում «սույն մասի «ա», «բ», «դ», «ե», «զ», «է» կետերով» բառերը փոխարինել «սույն մասի «ա», «բ», «դ», «զ», «է», «ը» կետերով» բառերով.

3. 5-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	Եզրակացություն	**Կատարված փոփոխությունները**
1. ՀՀ կառավարություն	Օրենսդրական տեխնիկայի տեսակետից՝ 1/ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 2-րդ հոդվածի 1-ին մասում «բառերով» բառը փոխարինել «բառերը» բառով: 2/ Նախագծի 3-րդ հոդվածում «ենթակետն» բառը փոխարինել «կետն» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:	Ընդունվել է: Ընդունվել է:	1 Կատարվել է համապատասխան փոփոխություն: 2.Կատարվել է համապատասխան փոփոխություն:

2. ՀՀ ԱԺ պատգամավոր Թ. Պողոսյան	«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում «100 տոկոս համայնքային մասնակցությամբ կազմակերպություն» բառերից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ. «երթուղային փաթեթ՝ համայնքի ավագանու կողմից հաստատված տարեկան ծրագիր, որն ընդգրկում է տվյալ համայնքը սպասարկող երթուղային գծերի քարտեզը, ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների բոլոր կանգառներ ժամանման և մեկնման ժամանակացույցերը, օպերատորի կողմից երթուղային տոմսերի (ժամային, օրական, շաբաթական, ամսական և տարեկան) թողարկման կարգը, յուրաքանչյուր կայանատեղի հասնելու համար միջինացված ուղևորավարձի սահմանման կարգը և վարորդների վերապատրաստման դասընթացների ծրագիրը:	Չի ընդունվել:	«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՕ-233-Ն օրենքի 4-րդ հոդվածում սահմանված է երթուղու սխեմա հասկացություն՝ որպես երթուղու սպասարկման հիմնական փաստաթուղթ (գրքույկ), որը պարունակում է տեղեկություններ երթուղու կանգառների, միջկանգառային հեռավորությունների, երթուղու ճանապարհային պայմանների մասին: Բացի այդ օրենքի 10-րդ հոդվածը կարգավորում է կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցի կազմակերպան հետ կապված հարցերը, այդ թվում նաև, որ Երևան քաղաքի ներքաղաքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցը կազմակերպում է Երևանի քաղաքապետը:

			Նախագծով օպերատորը հանդես է գալու որպես երթուղի սպասարկող կազմակերպություն, որը, ինչպես և այլ կազմակերպությունները, չի իրականացնելու երթուղային տոմսերի թողարկման գործառույթներ: Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» և «դ» ենթակետերով սահմանված են. «գ) միկրոավտոբուսային կանոնավոր փոխադրումների համար՝ D կարգի ավտոտրանսպորտային միջոցի վարման վերջին մեկ տարվա կամ մարդատար տաքսի ավտոմոբիլներով փոխադրումների վերջին 2 տարվա աշխատանքային փորձ. դ) ավտոբուսային փոխադրումների համար՝ միկրոավտոբուսային փոխադրումների իրականացման վերջին երկու տարվա

			աշխատանքային փորձ»: Այսինքն, վարորդների նկատմամբ որևէ լրացուցիչ պահանջ չկա, ինչի կապակցությամբ իրականացվի վերապատրաստում: